

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 45/2

30 հոկտեմբերի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Մարզո Հարությունյանի 15.10.2012թ-ի դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 12.10.2012թ. թիվ 2117629 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 04.10.2012թ. թիվ 2117629 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Մարզո Հարությունյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 01.11.2005թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 12.10.2012թ-ին կազմվել է թիվ 2117629 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտով պարտավորություններ առաջադրելու համար հիմք են հանդիսացել հսկիչ գնման ընթացքում ձեռք բերված տվյալները: Մասնավորապես, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 28.09.2012թ. թիվ 2209452 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Մարզո Հարությունյանի մոտ կատարվել է հսկիչ գնում: Արդյունքում 02.10.2012թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2209452 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

ս.թ. հոկտեմբերի 1-ին ժամը 12:50-ի սահմաններում Ա/Ձ Մարզո Հարությունյանի վաճառքի կետից, որը գործում է ք.Ալավերդի, Ս.Սարահարթ 2/30 հասցեում, մեր կողմից կատարվեց գնում 34600 դրամի՝ մեկ ոսկյա խաչ: Կատարված կանխիկ վճարման դիմաց տպվեց և մեզ տրամադրվեց ՀԴՄ կտրոն: Տպված կտրոնի վրա ժամը արտացոլված էր 13:19 և անհատ ձեռներեցի անվանումը բացակայում էր: Մեր կողմից ուսումնասիրության հանձնարարագիրը ներկայացվեց ծանոթացման և կատարվեց գնված ապրանքի հետ վերադարձ: Տվյալ կտրոնը չի համապատասխանում ՀՀ կառավարության 01.07.2005թ. թիվ 946-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին: Ա/Ձ Մարզո Հարությունյանի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշման 2-րդ կետի պահանջները:

Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2209452 արձանագրությունը կազմելուց հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի կողմից 04.10.2012թ-ին հրապարակվել է թիվ 2117629 հանձնարարագիրը, որի հիման վրա կազմվել է ստուգման ակտը:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հիմք ընդունելով Վանաձորի ՏՀՏ պետի 28.09.2012թ-ին թիվ 2209452 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված թիվ 2209452 արձանագրությունը և ղեկավարվելով ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքով Ա/Ձ Մարզո Հարությունյանի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշման 2-րդ կետի պահանջները: Համաձայն <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի Ա/Ձ Մարզո Հարությունյանին առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Մարզո Հարությունյանի դիմում-գանգատում մասնավորապես նշված է.

Սույն թվականի հոկտեմբերի 1-ին որպես հաճախորդ եկան երկու քաղաքացի, ցանկանալով գնել ոսկյա զարդ 34.600 դրամ արժողությամբ: Ես չգիտեի, որ հաճախորդները հարկային տեսուչներ Խ.Պողոսյանը և Ա.Թամազյանն էին: Առաջարկեցին 100 ԱՄՆ դոլար, սակայն ես հրաժարվեցի, քանի որ վաճառքը կատարում եմ միայն դրամով: Ես չիմանալով, որ հաճախորդները դրամ չունեն, նախօրոք տպել էի ՀԴՄ կտրոնը 34.600 դրամի: Ոսկյա զարդը ու կտրոնը մնաց ինձ մոտ: Խ.Պողոսյանը գնաց փողը մանրելու, իսկ Ա.Թամազյանը մնաց խանութում: Քիչ անց Ա.Թամազյանը դուրս գնաց և եկավ մի երիտասարդ, ագրեսիվ ձևով վկայականը ցույց տվեց և ասաց, որ հարկային տեսչությունից եկել է հատուկ

հանձնարարականով: Դրանից հետո տեսուչը սկսեց արձանագրություն կազմել ՀԴՄ-ի ժամը մի քանի րոպե սխալ լինելու, ինչպես նաև դրա վրա անուն ազգանունը լրիվ չլինելու վերաբերյալ: Ես պատասխանեցի, որ իմ հարկային կողմը և գումարը պարզ երևում է ՀԴՄ կտրոնի վրա: Խ.Պողոսյանը առաջարկեց, որ արձանագրություն չգրվի, քանի որ իմ կողմից երկրորդ անգամ տպված կտրոնի վրա այն իրոք երևում էր: Սակայն, Մ.Ֆրանգուլյանը նշեց, որ հատուկ հրահանգ ունեն իմ վրա ակտ կազմելու, քանի որ մի քանի անգամ իմ վրա թեժ գծով եկել է ահազանգ:

Գտնում եմ, որ սա թյուրիմացություն է և պնդում եմ, որ ես սխալ թույլ չեմ տվել: Ինձ առաջարկեցին այցելել հարկային տեսչություն, սակայն քանի որ վատառողջ էի, հրաժարվեցի այնտեղ գնալուց և արձանագրությունը ստորագրելուց: Մի քանի օրից ստացա Վանաձորի ՏՀՏ 02.10.2012թ-ի թիվ 2209452 արձանագրությունը և 02.10.2012թ-ի նույն համարի ակտը: 13.10.2012 թ-ին նորից ստացա երկրորդ ակտը 150.000 դրամ տուգանելու վերաբերյալ:

Ցանկանում եմ նաև նշել, որ ես ՀԴՄ-ով տպել եմ երկու անգամ 34.600 դրամ, սակայն որևէ գումար ինձ չի վճարվել, այն դեպքում, երբ ակտում նշված է, որ վերադարձրել են հսկիչ գնման գումարը:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Մարգո Հարությունյանը խնդրում է ստուգման ակտը ճանաչել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով Ա/Ձ Մարգո Հարությունյանի դիմում-գանգատում և ստուգման իրականացրած պաշտոնատար անձանց բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) «Հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրության բովանդակության տիպային ձև»-ը բաժնում հստակ նշված են հսկիչ գնման ընթացքում իրականացվող գործողությունները և հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրությունում արտացոլման ենթակա տվյալները (տեղեկությունները): Մասնավորապես, «Հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրության բովանդակության տիպային ձև»-ը բաժնում նշված է, որ հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրությունում պետք է նշվի գործողությունը (հսկիչ գնումը) փաստացի կատարող անձի անուն-ազգանունը, որը ներառված է հանձնարարագրում:

Քննարկվող դեպքում 02.10.2012թ-ին կազմված հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2209452 արձանագրությունում նշված չէ, թե հսկիչ գնումը փաստացի ում կողմից է կատարվել:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն, ակտում նշվում են ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:

Քննարկվող դեպքում ստուգման ակտում որպես իրավական նորմ, որի պահանջները չեն կատարվել, նշված է ՀՀ կառավարության 26.08.2004թ. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 1325-Ն որոշման 2-րդ կետը:

ՀՀ կառավարության 26.08.2004թ. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 2-րդ կետի համաձայն. «Օրենքով սահմանված ոլորտներում հսկիչ-դրամարկղային մեքենաների (այսուհետ՝ ՀԴՄ-ներ) պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ կազմակերպություն) առևտրական գործարքներ կատարելիս կամ ծառայություններ մատուցելիս դրամական հաշվարկները, բացառությամբ բանկային հաշիվների միջոցով կատարվողների,

իրականացնում են ՀԴՄ-ի և միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող ժապավենների միջոցով>:

Վերոգրյալից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտները դրամական հաշվարկները պետք է իրականացնեն ՀԴՄ-ի և միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող ժապավենների միջոցով:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ա/Ձ Մարզո Հարությունյանի կողմից ուսումնասիրության ընթացքում տպված ՀԴՄ կտրոնը, արձանագրեց, որ այն տպված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող ժապավենի վրա: Հետևապես, ստուգման ակտում նշվածը, որ Ա/Ձ Մարզո Հարությունյանի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 26.08.2004թ. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 1325-Ն որոշման 2-րդ կետի պահանջները, ըստ էության, չի համապատասխանում իրականությանը:

<<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>»:

Քննարկվող դեպքում ստուգման ակտի նախագիծը կազմվել է 05.10.2012թ-ին, իսկ ստուգման ակտը՝ 12.10.2012թ-ին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոկտեմբերի 6-ը և 7-ը եղել են ոչ աշխատանքային օրեր, ստուգման ակտը կազմվել է մինչև 5 աշխատանքային օրը լրանալը: Այսինքն, խախտվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին (կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին) ակտի նախագիծը ուսումնասիրելու և առարկություններ ներկայացնելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետը:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝


ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 12.10.2012թ. թիվ 2117629 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ